Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի

1) 7-9-րդ կետերում «վերջին երեք տարվա» բառերը փոխարինել «պաշտոնավարման վերջին երեք տարվա» բառերով,

2) 8-րդ կետում «քննիչ» բառից հետո լրացնել «,քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» բառերը, «նախկին քննիչ» բառերից հետո լրացնել «,նախկինում քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձ» բառերը,

3) 9-րդ կետում «օպերլիազոր» բառից հետո լրացնել «,օպերատիվ-հետախուզական գործունություն իրականացնող պաշտոն զբաղեցնող անձ» բառերով, «նախկին օպերլիազոր» բառերից հետո լրացնել «նախկինում օպերատիվ-հետախուզական գործունություն իրականացնող պաշտոն զբաղեցրած անձ» բառերով,

4) 10-րդ կետում «վերջին երեք տարվա» բառերը փոխարինել «փաստաբանական գործունեության վերջին երեք տարվա» բառերով

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-6-րդ մասերում քննիչի կամ փաստաբանի բառերը փոխարինել քննիչի, քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կամ փաստաբանի բառերով:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասում «քննիչի» բառից հետո լրացնել «,քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում «քննիչի» բառից հետո լրացնել «,քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերը, «օպերլիազորի» բառից հետո լրացնել «օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոն զբաղեցնող անձի» բառերը։

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի

1) 1-ին մասից հանել 14-րդ կետը.

2) 4-րդ մասից հանել 2-րդ կետը։

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։